*Այս դասի (մոտիվացնող ներածական տեսանյութ+ դասի տեքստ+ բառարան+ինքնաստուգիչ հարցեր) յուրացման համար հարկավոր է մինչև* ***4 ժամ***:

**ԴԱՍ 7**

**ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՏՉԵԼԻ ԼԵԶՎՈՎ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ**

**Ցուցումներ**

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռաուսուցման բաժնում և հեռաուսուցման փաթեթի կրիչում)

**Մինչև 5 րոպե**

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (2015թ. խմբագրությամբ) «Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում»: ՀՀ իրավական համակարգում այլ օրենսդրական կարգավորումներ առկա չեն անչափահասներին հարմարեցված պայմաններում և նրանց համար մատչելի լեզվով մինչդատական և դատական վարույթների կազմակերպման համար: Սակայն ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործությունների գրասենյակի կողմից ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի և Երեխաների

Ուշադրությամբ կարդացե՛ք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցե՛ք հաջորդ մասերին /ինքնաստուգիչ հարցեր, առաջադրանք/:

**Մինչև 190 րոպե**

իրավունքների միջազգային բյուրոյի հետ համատեղ մշակված և 2009 թվականին շրջանառության մեջ դրված «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխայի մասնակցությամբ արդարադատության վերաբերյալ» մոդելային օրենքը (այսուհետ՝ Մոդելային օրենք) [1] ունի որոշակի կարգավորումներ այս հարցերի հետ կապված, որն, ըստ էության, վերաբերում է տուժողներին և վկաներին (Հոդվածներ 13-28): Մոդելային այս օրենքն ընդունվել է ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական խորհրդի 2005 թ. ընդունված «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշների» հիման վրա (տե՛ս, ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի բանաձև 2005/20:) Այս ոլորտում առկա միջազգային իրավական փաստաթղթերը պարունակում են նորմեր նաև անչափահաս կասկածյալների և մեղադրյալների մասնակցության հարցերի վերաբերյալ ևս:

Մասնավորապես, Մոդելային օրենքի համաձայն, անչափահասի հարցաքննությունը պետք է իրականացվի հատուկ վերապատրաստում անցած քննիչի կողմից: Միաժամանակ, պետք է խուսափել հարցաքննությունների կրկնությունից ամբողջ քննության ընթացքում, որպեսզի անչափահասը կրկնակի վիկտիմիզացիայի չենթարկվի (Հոդված 13):

Անչափահասի նկատմամբ բժշկական փորձաքննություն նշանակելիս կամ անչափահասից նմուշ վերցնելիս պետք է ուղղորդվել դրանց կատարման այլընտրանք չունենալու հանգամանքով, այսինքն՝ միայն բացառիկ դեպքերում:

Անչափահասների մասնակցության վարույթների հենց սկզբից պետք է ապահովվի աջակցող անձի մասնակցությունը՝

անչափահասի ռեվիկտիմիզացիայից և կրկնակի վիկտիմիզացիայից խուսափելու համար (Հոդված 15):

Անչափահաս տուժողը կամ վկան պետք է իրավունք ունենա արտահայտելու իր տեսակետները, կարծիքներն ու համոզմունքներն իր իսկ խոսքերով, այդ թվում՝ նաև ազդելու վարույթի ընթացքը կանխորոշող որոշումների վրա:

Այս սկզբունքները հաշվի առնելով՝ Մոդելային օրենքում առաջարկվում է անչափահաս տուժողների և վկաների ցուցմունքների վստահության գաղափարը մինչև հակառակ կողմի ապացույցներ ներկայացնելը՝ վարույթն իրականացնող մարմնին պարտադրելով անցկացնել, այսպես կոչված, արժանահավատության թեստ՝ պարզելու համար անչափահասի ճշմարտությունն ընկալելու, կեղծիքից տարբերակելու ունակությունը: Նման դեպքերում հնարավոր է նաև նշանակել փորձաքննություն՝ նշված հանգամանքը պարզելու համար:

Այստեղ, ըստ էության, խոսք կարող է գնալ անչափահաս տուժողներին և վկաներին վարույթն իրականացնող մարմինների կողմից հարցաքննության կանչելու կամ այլ քննչական ու դատավարական գործողություններ կատարելուն ներգրավվելուն հնարավորինս նվազագույնի հասցնելու մասին [12; 13-34]:

Միևնույն ժամանակ, վարույթն իրականացնող մարմինը պետք է անչափահասի ցուցմունքները գնահատի՝ հաշվի առնելով նաև նրա տարիքը, հասունության աստիճանը, ճշմարտությունն ընկալելու և այն կեղծիքից տարբերակելու ունակությունը: Բոլոր դեպքերում, անչափահաս տուժողին և վկային պետք է հնարավորություն ընձեռվի իր խոսքերով ներկայացնելու իր տեսակետն իրեն առնչվող վարույթի

յուրաքանչյուր հարցի վերաբերյալ: Միաժամանակ, անչափահասին չպետք է նախազգուշացվի սուտ ցուցմունք տալու համար նախատեսված պատասխանատվության մասին կամ նրան պարտադրվի երդվել ճշմարտացի ցուցմունք տալու համար, այլ վարույթն իրականացնող մարմինը կարող է առաջարկել երեխային խոստանալ, որ կասի միայն ճշմարտությունը:

Նպատակահարմար է նաև ուշադրություն դարձնել որոշակի տեխնիկական հարցերի, որոնք անմիջականորեն կարող են ազդեցություն ունենալ անչափահասի վրա: Մասնավորապես, վկաների սպասելու սենյակը պետք է լինի մեծահասակներից առանձնացված հատվածում, վարույթային գործողությունների կատարման ժամանակ պետք է նախապատվությունը տրվի անչափահասներին, դահլիճը պետք է փորձել կահավորել այնպես, որ անչափահասի մոտ չառաջանա վախի ու անհանգստության զգացում, օրինակ, հեռացվեն պետության խորհրդանիշները, հնարավորինս փոփոխվի կահավորանքը, այդ թվում նաև հաշվի առնվի դատավորի կողմից առանց պատմուճանի նիստ անցկացնելու հնարավորության հարցը, ինչպես նաև անչափահասին հնարավորություն տրվի նստել իր ներկայացուցչի կողքին և վարույթն իրականացնել հնարավորինս ոչ ֆորմալ ձևաչափով:

Փորձեք նշել վարույթային գործողությունները արդյունավետ դարձնող այլ պայմաններ:

ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքով հնարավոր է համարել որոշակի դատավարական պահանջներից նահանջը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանցագործություն-ներից տուժել են երեխաներ: Նման դատավարությունները համարվում են որպես դաժան փորձություն, քանի որ երեխաները ստիպված են այդ ընթացքում «շփվել» իրենց նկատմամբ հանցանք կատարած անձի հետ: Այնուամենայնիվ, չպետք է խախտվի նաև մեղադրյալի պաշտպանական

իրավունքը [2-6]: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի առումով երեխա տուժողները դիտարկվում են որպես վկաներ, երբ նրանց ցուցմունքները օգտագործվում է որպես ապացույց ընդդեմ մեղադրյալի [6]: Չնայած այն հանգամանքին, որ վկային հարցաքննելու իրավունքը պետք է երաշխավորվի հրապարակային դատաքննության ընթացքում այն նկատառումով, որ մեղադրյալը հնարավորություն ունենա հակափաստարկներ ներկայացնելու, այնուամենայնիվ, կան բացառություններ [2]: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետը չի երաշխավորում մեղադրյալին անսահմանափակ իրավունք՝ վկային հարցաքննելու հրապարակային դատաքննության ընթացքում (Ա2) [7, 8]: Դատավարությունը պետք է այնպես կազմակերպված լինի, որ անչափահաս տուժողները, չենթարկվեն անհարկի վտանգի [9, 10]: Մյուս կողմից սեռական հանցագործությունների դեպքում, երբ երեխայի ցուցմունք-ները, ըստ էության, հանդիսանում են միակ կամ որոշիչ ապացույցը, որի հիման վրա դատարանը իր դատավճռով որոշում է մեղքը, պետք է ուշադիր լինել, որպեսզի մեղադրյալի պաշտպանական իրավունքները այդ ընթացքում խախտված չլինեն [2, 11]: Որպես կանոն՝ մեղադրական դատավճիռը չպետք է միայն կամ որոշիչ կերպով հիմնված լինի այն ցուցմունքների վրա, որոնք մեղադրյալը չի կարողացել վիճարկել [9]:

Անչափահասի մասնակցությամբ վարույթի ընթացքում անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել անչափահասի էմոցիոնալ վիճակին, մասնավորապես, նրան հնարավորություն տալով վարույթն իրականացնող մարմնին խնդրելու ընդմիջել համապատասխան գործողությունները կամ նույնիսկ հեռացնել այս կամ այն մասնակցին, որը լրացուցիչ սթրեսի է

ենթարկում անչափահասին:

Բազմաթիվ էական առանձնահատկություններով տարբերվում են այն գործերը, որոնցում որպես մեղադրյալ ընդգրկված են անչափահաս անձինք: Փորձը ցույց է տվել, որ չհասունացած գիտակցությամբ, դյուրընկալ, չկոփված բնավորությամբ և կողմնակի օրինակներին իսկույն տուրք տվող անձանց համար սովորական դատական վարույթը հղի է բազմաթիվ վտանգներով: Դատավարության հանդիսավորությունը նրանց մղում է մեծարելու հանցագործությունը, և հանցագործների շրջանում կեղծ փառքի ձգտում է առաջացնում, քննության հրապարակայնությունը նրանց ծանոթացնում է հանցավոր կյանքի այնպիսի կողմերի հետ, որոնք պետք է քողարկվեն պատանուց հնարավորինս երկար ժամանակ, և դատարանի դահլիճը վերածում է ինչ-որ առումով հանցագործությունների դպրոցի [13; 504]: Ըստ էության, այստեղ խոսքը գնում է նաև անչափահասների կողմից հանցագործությունների կանխարգելման մասին, քանի որ դատական քննություններին ներկա գտնվելը կարող է նպաստել անչափահասների շրջանում կայուն քրեական հակումների ձևավորմանը [13; 347-348]:

Ս.Ն. ընդդեմ Շվեդիայի [2] գործով տեսանկարահանվել էր տասնամյա տղայի հարցաքննությունը և դատավարության ընթացքում հրապարակայնորեն ցուցադրվել էր, իսկ երկրորդ հարցաքննությունը պարզապես ձայնագրվել էր և կրկին դատաքննության ընթացքում ներկայացվել դատարանին: Երկու դեպքերում էլ մեղադրյալի պաշտպանը հնարավորություն էր ունեցել հարցեր տալու, և այդ իսկ պատճառով դատարանը գտել է, որ տեղի չի ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի խախտում:

Այսպիսով, հաշվի առնելով և՛ միջազգային, և՛ ներպետական օրենսդրության կարգավորումները, անչափահասների մասնակցությամբ վարույթը պետք է կազմակերպել անչափահասներին հարմարեցված պայմաններում և նրանց մատչելի լեզվով: Վարույթային բոլոր գործընթացներում անչափահասներին պետք է վերաբերվել՝ հարգելով նրանց տարիքը, հատուկ կարիքները, նրանց հասունության և ըմբռնման աստիճանը՝ ի նկատի ունենալով հաղորդակցման ցանկացած հավանական դժվարություններ:

Փորձե՛ք վերլուծել և առանձնացնել Հայաստնում երեխայակենտրոն արդարադատությանը նպաստող և խոչընդոտող գործոնները:

Երեխայակենտրոն արդարադատության համակարգի դեպքում անչափահաս մեղադրյալը քրեական գործի վարույթի ամբողջ ընթացքում պետք է ներկայացված լինի փաստաբանի կողմից, և դատավարությանը պետք է մասնակցեն նրա օրինական ներկայացուցիչները: Մինչև դատական քննություն սկսելը՝ անչափահասներին պետք է ծանոթացնել դատարանի շենքին և մյուս հարմարություններին, ներգրավված աշխատակիցների դերին և պաշտոնին, դատավորները և մյուս մասնագետները անչափահասների հետ հարաբերություններում պետք է հարգանք և նրբանկատություն ցուցաբերեն, անչափահասների մասնակցությամբ դատական նիստերը պետք է հարմարեցված լինեն անչափահասի ընկալման արագությանը և նրա ուշադրության տևողությանը [14; 46-62]: Դատական նիստերի ժամանակ ընդհատումները և ուշադրության շեղումները պետք է նվազագույնի հասցվեն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անչափահասների ուշադրությունը շատ ավելի դժվարությամբ է կենտրոնացվում և շատ ավելի կարճատև ժամանակահատվածով, քան չափահասներինը: Ուստի, անհրաժեշտ է խուսափել նաև երկարատև ու առանց ընդմիջումների վարույթային գործողությունների կատարումից, ինչպես օրինակ քննչական տարբեր գործողությունները՝ հարցաքննություն, փորձարարություն, ու

դատավարական գործողություններ, օրինակ՝ անընդմեջ դատական նիստեր և այլն:

Ըստ ՄԱԿ-ի Պեկինյան կանոնների 10(3)-րդ կետի՝ իրավակարգը պաշտպանող մարմինների և անչափահաս իրավախախտի միջև շփումը, իրավակարգը ապահովելու համար, իրագործվում է այնպես, որ պատշաճ կերպով հաշվի առնելով գործի հանգամանքները՝ հարգվի անչափահասի իրավական վիճակը, աջակցվի անչափահասի բարեհաջողությանը և խուսափվի աղջկան կամ տղային վնաս պատճառելուց: Այսպիսով, անհրաժեշտ է նաև իրականացնել նախնական զրույցներ՝ անչափահասին ներկայացնելու այն վարույթային գործողության ընդհանուր պատկերը, որը պլանավորվում է իրականացնել, մասնավորապես, հնարավորինս մատչելի լեզվով, հասկանալի բառակապակցություններով, առանց խիստ իրավաբանական տերմինաբանության և դարձվածքների, անչափահասին բացատրել այն քննչական կամ դատավարական գործողությունը, որը պետք է իրականացվի վերջինիս մասնակցությամբ:

Անչափահասների մասնակցությամբ վարույթներում անչափահասների առնչությամբ պետք է կիրառվի առավելագույնս անհատականացված մոտեցում: Այսինքն, քրեական դատավարությունը պետք է ընթանա այնպես, որ հաշվի առնվեն անչափահասների անհատական առանձնահատկությունները [13; 349]:

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը թե՛ մինչդատական և թե՛ դատաքննական փուլերում, անչափահասների մասնակցությամբ վարույթներն անհրաժեշտ է կազմակերպել այնպիսի պայմաններում, որպեսզի հնարավորինս քիչ լինեն այն հոգեբանական արգելքները, որ կարող են առաջ բերել քրեադատավարական խիստ պահանջները:

Այսպիսով, դասի շրջանակներում քննարկեցինք

- անչափահասների համար հարմարեցված պայմաններում և նրանց մատչելի լեզվով մինչդատական վարույթի և դատական քննության կազմակերպման կանոնակարգումները ինչպես ՀՀ օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային փաստաթղթերով:

Ինչ վերաբերում է անչափահասների նկատմամբ պատժի և քրեաիրավական ներգործության այլ միջոցների նշանակման սկզբունքներին ու առանձնահատկություններին, ապա դրանք կներկայացվեն հաջորդ դասի ընթացքում:

Նշումների համար `

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

**Կրկնակի վիկտիմիզացիա** - ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործությունների գրասենյակի կողմից ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի և Երեխաների իրավունքների միջազգային բյուրոյի հետ համատեղ մշակված և 2009 թվականին շրջանառության մեջ դրված «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխայի մասնակցությամբ արդարադատության վերաբերյալ» մոդելային օրենքի 1-ին գլխում նշված հասկացությունների համաձայն՝ վիկտիմիզացիա, որին ենթարկվում է հանցագործությունից տուժած անձը ոչ թե որպես հանցավոր արարքի ուղղակի հետևանքի, այլ պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների արդյունքում:

**Աջակցող անձ** – ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործությունների գրասենյակի կողմից ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի և Երեխաների իրավունքների միջազգային բյուրոյի հետ համատեղ մշակված և 2009 թվականին շրջանառության մեջ դրված «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխայի մասնակցությամբ արդարադատության վերաբերյալ» մոդելային օրենքի 1-ին գլխում նշված հասկացությունների համաձայն՝ հատուկ վերապատրաստում անցած անձ, ով կոչված է աջակցելու երեխային վարույթի ողջ ընթացքում՝ հարկադրանքի, ռեվիկտիմիզացիայի և կրկնակի ռեվիկտիմիզացիայի ռիսկը կանխելու նպատակով:

**Ռեվիկտիմիզացիա** – ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցա-

**Ցուցումներ**

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

**Մինչև 15 րոպե**

գործությունների գրասենյակի կողմից ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի և Երեխաների իրավունքների միջազգային բյուրոյի հետ համատեղ մշակված և 2009 թվականին շրջանառության մեջ դրված «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխայի մասնակցությամբ արդարադատության վերաբերյալ» մոդելային օրենքի 1-ին գլխում նշված հասկացությունների համաձայն՝ իրավիճակ, երբ անձը որոշակի տևական ժամանակահատվածի ընթացքում ենթարկվում է մեկից ավելի քրեական միջադեպերի:

**Երեխայակենտրոն արդարադատության համակարգ** – Արդարադատության համակարգ, որը միտված է առաջին հերթին երեխաների իրավունքների և օրինական շահերի կատարմանը՝ հաշվի առնելով վարույթային գործողությունները: